

ԱՐԳՈՒՍ

ՖԱՇԻԶՄԻ ՅԵՎ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄՈՊՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԻ

ՅԵՐԵՎԱՆ  1937

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

31 JAN 2018

ԱՐԳՈՒՍ

ՖԱՇԻՉՄԻ ՅԵՎ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄՈՊՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԿԵՆՏԿՈՍԻ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն □ 1 9 3 7

ПРОТИВ ФАШИЗМА И ВОЙНЫ

Издание ЦК МОПР-а Арм. ССР  
Ереван, 1937



11-2864294

Թարգմ. Հ. Մազմանյան  
Խմբ. Ա. Շահինյան  
Տեխ. խմբ. Ս. Խաչատրյան  
Մրբագրելի Վ. Զիդեյան  
Կոնսր. սրբ. Լ. Արսլյան

Իլալիտի լիազոր Ի-4899  
Պատվեր № 139, արժ 3.000  
Հանձնված է արտադրության 21/VII 1937 թ.  
Ստորագրված է ավագրության 23/VII 1937 թ.  
Գինը 50 կոպ.

Հայկուսերատի տպարան, Յերևան, Ալանվերդյան № 71

1937 թվի ոգոստոսի 1-ը,—հերթական միջազգային հակա-  
պատերազմական որը,—ամբողջ աշխարհի ժողովրդական մաս-  
սաներն անց են կացնում հետևյալ նշանաբանով. սահմանել մի-  
ջազգային պրոլետարիատի միասնություն և հավաքել աշխատա-  
վորները, դեմոկրատիայի ու խաղաղության կողմնակիցների ու-  
ժերը՝ ավազակաբարո Փաշիզմի և պատերազմի դեմ պայքարելու  
համար:

Վորո՞նք են ներկա միջազգային հակապատերազմական որվա  
առանձնահատկությունները: Այդ որը ժողովրդական մասսաները  
ստիպված են հաշվի նստել արդեն տեղի ունեցող այն ավազա-  
կային պատերազմի փաստի հետ, վոր Արևմուտքում ու Արևել-  
քում Փաշիստ ազդեցությունները մղում են իսպանական, չինական ու  
հարեչական ժողովուրդների դեմ: Փաշիստական Գերմանիան իր  
դաշնակիցների—իտալական Փաշիզմի և իմպերիալիստական Ճա-  
պոնիայի հետ միասին—որակարգում բացահայտ կերպով դրել է  
աշխարհի նոր վերարածանումը զավթողական պատերազմի մի-  
ջոցով: Այդ նպատակի համար նրանք տենդորեն սպառազինվում  
են, ուղղակի դաշինքներ են կնքում, իմպերիալիստական նոր  
խմբակցություններ ստեղծում, միավորում են սև ուժերը, վո-  
րոնք մարդկությունն սպառնում են նոր պատերազմով: Բեռլինի,  
Հոտի և Տոկիոյի միջև բազմազան ուղղակի դաշնադրերի և  
համաձայնությունների շղթա յե ձգվում: Ճապոն-գերմանական  
ուղղակի դաշինքը յեղել է «մեծ պատերազմի» նախապատրաս-  
տություններից մեկը: Իրան անմիջականորեն հետևեց  
Ճապոնական ուղղամուկների զավթողական գործողությունների  
ուժեղացումը Չինաստանում և Հիտլերի ու Մուսսոլինիի միատեղ  
ինտերվենցիան Իսպանիայում, նրանց պատերազմն իսպանական  
ժողովրդի և նրա դեմոկրատական հանրապետության դեմ:

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՁ ԱՇԽԱՐՀԻ  
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔՆ Ե**

Միջազգային այս լարված իրադրություն մեջ խաղաղության բոլոր բարեկամները, առաջավոր և սրբոգրեսիվ առաջադեմ մարդկության բոլոր լավագույն ներկայացուցիչները հայացքները դառնում են դեպի Սորհրդային Միություն, վորը, ինչպես հզոր մի ժայռ, կանգնած է կապիտալիստական շրջապատման մոլեգնող ծովի գեմ: Որեցոր, ամսե ամիս, տարեցտարի ամուսնում են սոցիալիզմի յերկրի ուժը, հարստությունը, հզորությունն ու պաշտպանունակությունը: Չկա խաղաղության և ժողովուրդների կողեկտիվ անվտանգության մի ավելի հաստատուն պատվար, քան հորհրդային մեծ Միությունը, բանվորների և գյուղացիների հզոր, անպարտելի սոցիալիստական պետությունը:

Մեծ է ու ջերմ ժողովրդական մասսաները նվիրվածությունն ու սերը դեպի իրենց հայրենիքը, դեպի իրենց սոցիալիստական յերկիրը: Մեր չքնաղ ու յերջանիկ հայրենիքի բոլոր անհամար հարստությունները, նրա անձայրածիր տարածությունները, նրա քաղաքներն ու գյուղերը, նրա հարուստ կուլտուրան, — այս ամենը ժողովրդական սեփականություն է: Հայրենիքի անձեռնմխելիությունը, նրա պատիվն ու փառքը, նրա հզորությունն ու բարեկեցությունը կյանքի բարձրագույն որենքն են:

Սորհրդային Միությունը հզոր է առաջնակարգ սոցիալիստական արդյունաբերությամբ, վորն ստեղծված է ստալինյան հընգամյակներով: Սորհրդային Միությունն ունի աշխարհումս ամենախոշոր սոցիալիստական գյուղատնտեսությունը, վորը տարեցտարի ավելի և ավելի յե բարգավաճում: Սորհրդային յերկրին պահակ է կանգնած Բանվորա-գյուղացիական հզոր կարմիր բանակը, վորին ստեղծել է Լենինի-Ստալինի կուսակցությունը և վորը մինչև վերջը հավատարիմ է հորհրդային կառավարությանը, կուսակցությանը, նրա կենտրոնական կոմիտեյին և մեծ Ստալինին:

Սորհրդային Միությունն ու խորհրդային իշխանությունն ամենաուժեղն են աշխարհիս բոլոր պետություններից: Բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության անպարտելի ուժի աղբյուրը խորհրդային ամբողջ ժողովրդի սերն ու վստահությունն է դեպի Լենինի-Ստալինի՝ իր հարազատ կուսակցությունը, դեպի մեր բոլոր հաղթանակների կազմակերպիչը:

Մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի որդան «Սրահ»-ն 1937 թվականի հունիսի 12-ի իր առաջնորդող հոդվածում իրավամբ գրել է.

«Վոչ մի ուժ չի կարող ընկճել այն ժողովրդին, վորին դեկավարում է Լենինի-Ստալինի կուսակցությունը: Մեր փառապանծ կուսակցության դեկավարությամբ ԽՍՀՄ ժողովուրդները տապալեցին ցարիզմը, տապալեցին կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը: Լենինի-Ստալինի կուսակցության դեկավարությամբ ԽՍՀՄ ժողովուրդները հաղթանակներ են ավարտեցին քաղաքացիական պատերազմը և ջախջախեցին գերմանական, ճապոնական և այլ ինտերվենտների զորքերը, վորոնք վորձում էյին տիրանալ Սորհրդային յերկրին: Լենինի-Ստալինի կուսակցության դեկավարությամբ մեր յերկրում վերացված են շահագործող դասակարգերը, ստեղծված են առաջնակարգ սոցիալիստական արդյունաբերություն և աշխարհումս խոշորագույն սոցիալիստական գյուղատնտեսություն:

Սորհրդային հասարակակարգն ուղղեց բաղձամիլիոն ժողովրդի մեջքը, նրա մեջ արթնացրեց նոր, սոցիալիստական յերջանիկ կյանք»:

Այն մոմենտին, յերբ Փաշխտ ագրեսորները պատերազմի մեքենան քայլ առ քայլ վորխարկում են ավելի ու ավելի մեծ արագություն, ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաները սիրով ու յերախտազիտությամբ իրենց հայացքները դարձնում են դեպի Սորհրդային Միությունը, վորը խաղաղության համար մղած իր վճռական ու հետևողական պայքարով ջախջախում է պատերազմի հրձիգների պլանները: Բոլոր աշխատավորների յեղբայրական ձեռքերը մեկնվում, մարդկության լավագույն և արմատագույն ներկայացուցիչների հույսերն ուղղվում են դեպի Սորհրդային Միությունը, դեպի խաղաղության և կոլեկտիվ անվտանգության հաստատագույն պատվարը: հորհրդային Միությունն ամբողջ առաջավոր և պրոգրեսիվ մարդկության իսկական հայրենիքն է, ժողովուրդների աշխատանքի ու յեղբայրության հայրենիքը, կապիտալիզմի և ֆաշիստական ռեակցիայի կողմից շահագործվող բոլոր մեղավոր աշխատավոր մասսաների հույսը:

Սորհրդային Միության մեջ ապրելը մեծագույն յերջանկություն է: Չկա և չի կարող լինել ավելի մեծ բերկրանք, քան

սերը դեպի իր հայրենիքը, չկա ավելի մեծ պատիվ, քան նրա պաշտպանութունը թշնամիների մեքենայութուններին:

Ստալինյան Սահմանադրութունը 133-րդ հոդվածում ասում է.

«Հայրենիքի պաշտպանութունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է: Հայրենիքին զավաճանելը, — յերդման խախտումը, թշնամու կողմն անցնելը, պետութան ռազմական հորրությանը վնաս հասցնելը, լրտեսութունը, — պատժվում են որենքի ամբողջ խտությամբ, վորպես ամենածանր չարագործութուն»:

Մեր յերկրի ժողովրդական մասսաները Լենինի-Ստալինի իրենց հարազատ կուսակցության ղեկավարությամբ, հաղթահարելով անլուր դժվարութուններ, հսկայական զոհերի դնով, բազմաթիվ թշնամիների դեմ մղած պայքարով նվաճել են իրենց հայրենիքը: Այստեղից էլ բղխում են խորհրդային մեծագույն հայրենասիրության ամենաբազմազան արտահայտութունները: Խորհրդային յերկրում ամեն մեկը, պիտներին սկսած մինչև համաշխարհային անուն ունեցող գիտնականը, պատրաստ է իր ուժերը և իր կյանքը տալու հայրենիքի բարորության համար: Ուրիշ վոր յերկրում են հնարավոր հերոսության այնպիսի արտահայտութուններ, վորոնցով պարծենում են մեր յերկրի ժողովուրդները: Այդպիսի հերոսության ցայտուն արտահայտութուն հանդիսացավ վերջերս հյուսիսային բևեռի նվաճումը խորհրդային անվահար բևեռախույզների և ողաչունների կողմից՝ ակադեմիկոս Ռոտո Յուլյեվիչ Շմիդտի ղլխավորությամբ: Խորհրդային մարդիկ հպարտությամբ են կրում բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետության քաղաքացիների կոչումը: Բևեռային սառույցներից մինչև յենթասարեաղարձային յերկիրները, Սաղաղ ուկրանոսից մինչև Բալտիկը, Խորհրդային յերկրի անձայրածիր տարածութուններում բազմանում են հերոսության և դեպի հայրենիքը տածած անձնվեր սիրո որինակները:

Բանվորները, կորանտեսականները, խորհրդային ինտելիգենցիան, ծառայողները համակված են հպարտությամբ և սիրով՝ դեպի իրենց անպարտելի սոցիալիստական հայրենիքը: Խորհրդային հասարակակարգը ամենահաստատուն և ամենամասսան հասարակակարգն է յերկրագնդի վրա: Խորհրդային կառավա-

րուքյունն ամենահաստատուն և ամենակայուն կառավարությունն է աշխարհում: Նա անխզելիորեն կապված է միլիոնավար ժողովրդական մասսաների հետ, վորոնց կամքը նա մարմնացնում է և իրականացնում: Ահա թե ինչու Խորհուրդների դրոշը ծածանվում է մեր յերկրի վրա, ավելի և ավելի հարազատ է դառնում բոլոր յերկիրների և կոնտինենտների (մայր ցամաքների) հարյուրավոր միլիոն պրոլետարների և աշխատավորների համար:

Խորհրդային Միության խաղաղության քաղաքականութունը, վոր արտահայտում է մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների խորագույն ձգտումները, ընդունելութուն և աջակցութուն է գտնում խաղաղության բոլոր բարեկամների կողմից, — նաև խորհրդային սահմաններից դուրս: Դրա հետ միասին կապիտալիստական շրջապատման մեջ դեռ շարունակում են գործել մեզ թշնամի իմպերիալիստական ուժերը, վորոնք ձգտում են նոր պատերազմներ առաջացնել, զավթելու ուրիշ հողերը և ստրկացնելու ժողովուրդներին, շարունակում են գործել այն ուժերը, վորոնք սպառնում են մեր հայրենիքին:

## ՉՄՈՒԱՆԱԼ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընկեր Ստալինը 1937 թվականի մարտ ամսում Համի(բ)ի Կենտկոմի պլենումում արած իր ղեկուցման մեջ ասել է, թե յերբեք չի կարելի մոռանալ այն մասին, վոր խորհրդային կշխմութունը հաղթանակել է աշխարհի միայն մեկ վեցերորդ մասում, վոր աշխարհի հինգ վեցերորդ մասը կազմում են կապիտալիստական պետութունների տիրապետության տակ գործնվող յերկիրները:

«Մեղանում ընդունված է շողակրատել կապիտալիստական շրջապատման մասին, — ասում էր ընկեր Ստալինը, — բայց չեն ուզում խորամուխ լինել, թե այդ ի՞նչ բան է կապիտալիստական շրջապատումը: Կապիտալիստական շրջապատումը, — այդ դատարկ Փրազ չէ, այդ շատ ունալ և անախորժ մի յերևույթ է: Կապիտալիստական շրջապատումը — այդ նշանակում է, վոր կա մի յերկիր, — Խորհրդային Միութունը, վորն իր մոտ սոցիալիստական կարգեր է հաստատել, և, բացի դրանից, կան շատ յերկիրներ, — բուրժուական յերկիրներ, վորոնք շարունակում են կապիտալիստական

ձևի կյանք վարել և վորոնք շրջապատում են Խորհրդային Միությունը, սղասելով առիթի, վորպեսզի հարձակվեն նրա վրա, ջախջախեն նրան կամ, համենայն դեպս, խարխլեն նրա հզորութունն ու թուլացնեն նրան»:

Խորհրդային Միության վրա գինված հարձակում նախապատրաստելու ավանդաբղում գտնվում են այնպիսի յերկիրներ, վորտեղ իշխանությունը զավթել են Փաշխտական ուժերը: Ֆաշխտական Գերմանիայի և իմպերիալիստական Ճապոնիայի կատարի պատրաստվելը «մեծ պատերազմին» քողարկվում է ամենասանձարձակ հակախորհրդային թշնամազրգոսումով: Ֆաշխտ ազրեսորները, հանդես գալով կոմունիզմի և Խորհուրդների յերկրի դեմ պայքարողների դիմակի տակ, հույս ունեն այդ ճանապարհով իրենց ազատություն տալ սպառազինւումների հետագա ուժեղացման համար և վախեցնել այն յերկիրները, վորոնք Խորհրդային Միության մեջ տեսնում են ընդհանուր խաղաղության հաստատուն հենարանը:

Ֆաշխտ ազրեսորները տեսնում են, վոր հսկայական չափերով աճել է Խորհրդային Միության պաշտպանունակությունը: Կարմիր Բանակը, վոր պաշտպանում է Խորհրդային սահմանները, ըստ արժանույն վախելում է ժողովրդական մասսաների ջերմ սերը: Նա շրջապատված է կուսակցության, կառավարության և ամբողջ յերկրի ամենորյա հոգատարությամբ: Կուսակցության ու կառավարության հոգատարությամբ, ամբողջ յերկրի ջերմ աջակցությամբ, Կարմիր Բանակը սարքավորված է պաշտպանության ամենակատարելագործված տեխնիկայով: Չկա և չի կարող լինել ավելի հզոր բան, քան խորհրդային ինքնաթիռները, տանկերն ու հրանոթները, յերբ դրանք գտնվում են ժողովրդի զավակներին ձեռքերում, խորհրդային հայրենասերներին ձեռքերում:

Ահա թե ինչու պատերազմի Փաշխտ հրձիգների ատելությունն առաջին հերթին ուղղված է Խորհրդային Միության պաշտպանության դեմ և այդ պաշտպանության ավանդարդի-Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի դեմ: Խորհրդային Միության թշնամիները ձգտում են խարխլել Կարմիր բանակի հզորությունը, այնտեղ տեղավորել իրենց լրտեսներին ու դիվերսանտներին, կազմալուծել մեր հայրենիքի պաշտպանության ամբողջ սխտեմը, նախապատրաստել Խորհրդային Միության ազգական պարտությունը սպազա պատերազմում:

«Պարզ չե՞ արդյոք, վոր քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական շրջապատումը,—ասում էր ընկեր Ստալինը Համ. Կ(բ)Կ ԿԿ-ի պլենումում,—մեզանում գոյություն են ունենալու մնասարարներ, լրտեսներ, դիվերսանտներ և մարդասպաններ, վորոնք մեր թիկունքներն են ուղարկում ստարերկրյա պետությունների գործակալները»:

Ընկեր Ստալինը միաժամանակ մատնանշել է, վոր ստարերկրյա պետությունների հետախուզական որդանների գործակալություն, վարձկաններ է հանդիսանում բանվոր դասակարգի յերդվյալ թշնամիների բանդան, մնասարարների, դիվերսանտների, հետախույզների, լրտեսների ու մարդասպանների տրոցկիստական բանդան: «... Տրոցկիստները վաղուց արդեն դարձել են մեծ ճանապարհի ավաղակներ՝ ընդունակ ամեն մի դարչեխության, ընդունակ ամեն մի նողկալիության, ընդհուպ մինչև լրտեսություն և իրենց հայրենիքին ուղղակի զավաճանելը, միայն թե կարողանան վատություն անել Խորհրդային պետությանը և խորհրդային իշխանությանը»:

Տեոքիստների, դիվերսանտների, լրտեսների ու մնասարարների տրոցկիստական-դիտովյեվական շայկան, ստարերկրյա հետախուզությունների փողերով, Գերմանիայի ու Ճապոնիայի Փաշխտական վոհմակների առաջադրություններով՝ իր խաղը խաղում էր հույսը դրած Փաշխտ ազրեսորների պատերազմը Խորհրդային Միության դեմ արագացնելու վրա, նախապատրաստելով ԽՍՀՄ ռազմական պարտությունն այն դեպքում, յերբ նրա վրա հարձակվեն թշնամի պետությունները: Նախապատրաստելով կապիտալիզմի վերականգնումը մեր յերկրում՝ ժողովրդի թշնամիները պատրաստ էլին Փաշխտ ավաղակներին տալու Խորհրդային յերկիրները՝ Ուկրաինան—դերմանացիներին, Պրիմորյեն—ճապոնացիներին:

Իր ժամանակին ԽՍՀՄ Գերագույն դատարանն իր անողոք դատավճիռը կայացրեց հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի բանդիտների դեմ: ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատն ընկ. Ն. Ի. Յեթովի դեկավարությամբ,—վորի խոսքերը չեն սարբերվում գործից,—հայտնաբերեց զավաճանական հակահեղափոխական դիտլորական Փաշխտական մի կազմակերպություն, վորի գլխավոր դեկավարները,—լրտեսներն ու հայրենիքի զավաճանները, վորոնք անմիջականորեն կապված են յեղել Փաշխտական յերկիրների գլխավոր շտաբների հետ,—մեր-

կացվեցին և արժանի պատիժն ստացան խորհրդային արդարադատությունից: Ֆաշիստական լրտեսները—Տուխաչևիվսկին, Յակիրը, Ուբորեվիչը և ուրիշները,—ԽՍՀՄ Գերագույն դատարանի դատավճռով զնդակահարվեցին: Ամբողջ բազմամիլիոն խորհրդային ժողովուրդը վողջունեց արդարացի դատավճիռը և դրա կատարումը:

### ԿԱՐՏԻՐ ԲԱՆԱԿՆ ԱՆՊԱՐՏԵԼԻ ՅԵ

Խորհրդային Միության Ֆաշիստական թշնամիները հույս են դրել ռազմական պարտության հասցնել սոցիալիզմի յերկիրը, թուլացնել Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի,—խորհրդային իշխանության հաստատուն և հուսալի այդ պատվարի,— մարտական հզորությունը:

ԽՍՀՄ պաշտպանության ժողովրդական կոմիտար, Խորհրդային Միության մարշալ ընկ. Կ.Յե. Վորոչիլովը 1937 թվականի հունիսի 12-ի իր հրամանում գրել է.

«Թշնամիները սխալվեցին իրենց հաշիվների մեջ: Նրանք չեն տեսնի Կարմիր բանակի պարտությունը: Կարմիր բանակը յեղել է անհաղթելի և կմնա անհաղթելի: Համաշխարհային Ֆաշիզմն այս անգամ ևս կիմանա, վոր նրա հավատարիմ գործակալները՝ Գամառնիկներն ու Տուխաչևիվսկիները, Յակիրներն ու Ուբորեվիչները և այլ դավաճանական այն մեռելոտին, վոր լսկեյարար ծառայում էր կապիտալիզմին, բնաջինջ է յեղել յերկրի յերեսից, և նրանց հիշատակը կանխելի ու կմոռացվի...»

Կարմիր բանակը կա և միշտ կլինի իբրև նոր սոցիալիստական կյանք կառուցող, հաղթանակած ժողովրդի միան ու արյունը: Մենք մաքրում ենք մեր շարքերը Ֆաշիստական-լրտեսական դարձելիներից և այսուհետև թույլ չենք տա, վոր կրկնվեն այդ խայտառակ փաստերը: Մեր բանակը մաքրելով նեխված գիրքից՝ մենք դրանով իսկ ե՛լ ավելի ուժեղ և անխոցելի յենք դարձնում այն: Բանակն ամբապնդվում է նրանով, վոր մաքրում է իրեն նեխվածքից:

Կարմիր բանակը պարտավոր է ունենալ և կունենա միևնչև վերջն ազնիվ, բանվորների և գյուղացիների գործին նվիրված, իր իսկական հրամանատարների ու պետերի կազմը:

Կարմիր բանակն ամբողջովին, սկսած կարմիր-բանակայինից մինչև բարձրագույն պետը յեղել է, կա և կլինի միանական, հորը, միաձույլ մարտական կոեկտիվ:

Մեր հրաշալի բանակի շարքերում տեղ չկա և չի կարող լինել մատնիչների, յերդմանն ու հայրենիքին դավաճանողների համար»:

Խորհրդային Միության թշնամիները, Ֆաշիստական ամեն տեսակ դիմադրական դրոշները հաճախ Կարմիր բանակը համեմատում են ցարական հին բանակի հետ, մեր հրամանատարական կազմը—հին ցարական սպայության հետ: Չկա և չի կարող լինել համեմատություն Կարմիր բանակի և ցարական բանակի միջև: Ցարական բանակը յեղել է կազարմայական, խստավարժման յենթակա (МУШТРОВА), մի հետամնաց, դանդաղաչարժ, անճոռնի և անշնորհ մի բանակ: Նրա հրամանատարական կազմն աչքի յեր ընկնում իր վերին աստիճանի նեղ մտահորիզոնով: Կաստայականությունը, աստիճանամեծարումը, ստորաքարշությունը թագավորում է յին սպայական միջավայրում: Ռազմական հազվագյուտ տաղանդները կորչում է յին անընդունակ, սահմանավակ, բթամիտ, բայց և դրա դիմաց դոտողամիտ մարդկանց զանգվածում: Ազնվական արխատիլրատիան բանակի ղեկավարությունը համարում էր իր առանձնաշնորհումը: Ցարական հրամանատարական կազմի այդ հատկություններն առանձնապես յերևան յեկան վերջին համաշխարհային պատերազմի ժամանակ, վորը դըրսևորեց ցարական բանակի ղեկավարության կատարյալ սնանկությունը:

1915 թվականի ոգոստոսին չինոյնիկ Կուզաչևիվը ցարական դորահրամանատարության գլխավոր կայանից արտաքին գործերի մինիստր Սազոնովին գրել է.

«Ամենից վատը մեր ղեկավար գեներալներն են... Մինչև այժմ, չնայած նրան, վոր չափազանց հեշտությամբ են նրանց փոխում և կարգում, մի ամբողջ տարվա ընթացքում պատերազմն առաջ չբաշեց և վոչ մի Սուվորով: Յեվ վորովհետև գեներալների մեծամասնությունը վերցնում են գլխավոր շտաբի սպաներից, ուստի հարկ է լինում անել այն յեղրակացությունը, վոր նրանց ծնող ակադեմիան իր կոչման բարձրության վրա չէ: Այս յեղրակացությունը հաստատվում է գլխավոր շտաբի միջանի սպաներին վերաբերող



դիտողութեամբ,—վորոնք ունեցած չարագանց մեծամտութեանը և վոչնչով չարդարացող ինքնավստահութեանը քողարկում են հազվագետ մտավոր վողորմելիութեանը և լիակատար դիմադրիչութեանը»։ («Կարմիր արխիվ», հատոր XXVII, 1928 թ., ուսեերեն)։

Նախկին ցարական դինվորական մինիստր գեներալ Սուխոմլինովն իր հուշերում գրում է․

«Հենց վորպես դասավանդող և ուղղական գրող, յես պետք է ավելի մոտիկից ծանոթանայի դավառական կայազորի կյանքին, նրա առանձնահատուկ որենքներին․․․»։

Սուխոմլինովը նշում է, թե իրեն միանգամից զարմացրել է մի հանդամանք,—«վարչութեանները բարձրագույն պատասխանատվության տեք անձեր և խոշոր պաշտոնները դրավոդները բավականաչափ իրազեկ չեն յեղել բանակի գործնական կյանքին։ Նրանք չեն իմացել զորամասերի վողին, ուստի և չեյին հասկանում ու գնահատում այդ վողու արտահայտութեաններն այս կամ այն ձևով, իսկ դա ևս ունեցել է իր հետևանքները․ չարամիտ բամբասանքը և անվստահութեանը ժանտախտի պես վարակում էյին միջնորդը, և վնասակար տարրերը հնարավորութեան էյին գտնում խառնվելու առանձին զորամասերի, սպայակուլտի և առանձին սպաների բախտին» (Մոսկվա, Ռուսպետհրատ, 1926 թ., էջ 64)։

Այս բնութագրումները կարող են լրացվել համաշխարհային պատերազմի և սպիտակ բանակների պատմութեան բազմաթիվ որինակներով, բանակների, վորտեղ փարթամորեն ծաղկում էյին ցարական սպայութեան բոլոր վերոհիշյալ հատկութեանները։ Այդպիսի հրամանատարական կազմերի ղեկավարութեամբ բանակը, չնայած իր մարտիկների քաջութեան, ընդմիշտ դատապարտված է պարտութեան, մանավանդ, յեթե այդ բանակին հարկ լինի հանդիպելու Բանվոր-գյուղացիական Կարմիր բանակի հետ, վորին ղեկավարում են քաղաքացիական պատերազմի դաժան դրպրոցն անցած, մինչև արյան վերջին կաթիլը բոլշևիզմի գործին նվիրված, ստալինյան կոլեկտիվ տեք հրամանատարական կազմերը։ Կարմիր բանակի հրամանատարները չընկալում էին կուսակցութեան մշտական ուղղորդութեամբ, կառավարութեան հողատարութեամբ, ժողովրդի ջերմ սիրով։ Ժողովրդական մասսաները դիտեն, վոր նրանց հարազատ Կարմիր բանակը հանդիսանում է

մեծագույն բոլշևիկյան մի դարբնոց, վորը կոփված, դժվարութեանները չվախեցող, անվեհեր մարտիկներ է անեցնում։

Սորհրդային Միութեան թշնամիները սխալվեցին իրենց հաշիվների մեջ։ Ձախձախված են Կարմիր բանակի ուղղական հողութեանը խարխիլու և Սորհրդային Միութեան պաշտպանունակութեանը թուլացնելու նրանց հույսերը։ Փաշխատական լըրտեները,—Տուխաչևիսկին, Ուրոբևիչը և ուրիշները բռնվեցին հանցանքը գործելիս։ Բանվոր դասակարգի ղեկաւատուրան հայտնաբերեց նրանց պլանները և նրանց Փաշխատ տերերի պլանները։ Խորհրդային հետախուզութեան անամ գգաստութեանը, կենիւնի-Ստալինի մեծ կուսակցութեան ստեղծած՝ բանվոր դասակարգի ղեկաւատութեան որգանների գգաստութեանը մինչև վերջ հայտաբերեց այն ստոր միջոցները, մեքողներն ու գործելաները, վորոնցով Փաշխատական լրտեսների, իրենց հայրենիքի դավաճանների ու մատնիչների բանդան ուզում էր նախապատրաստել Կարմիր բանակի ջախջախումը, Խորհրդային Միութեան ուղղական պարտութեանը և կալվածատերերի ու կապիտալիստների իշխանութեան վերականգնումը։

Ժողովրդի թշնամիները քողարկվելով կուսակցութեան անդամների և Բանվոր-գյուղացիական Կարմիր բանակի պետերի բարձր կոչումով, դիտեյին, վոր չեն կարող աջակցութեան գրտնել բանվորների ու գյուղացիների, Բանվոր-գյուղացիական Կարմիր բանակի մարտիկների, բանվորների ու գյուղացիների գործին նվիրված ազնիվ հրամ-պետկազմի կողմից։ Նրանք խաբելով էյին աշխատում, թաղնվում էյին ժողովրդից և կարմիր-բանակայինները, վախենալով բանալ իրենց իսկական դեմքը։ Սորհրդային Միութեան թշնամիները սխալվեցին իրենց հաշիվների մեջ։ Թուեանվոր, դեպի բանվորներն ու գյուղացիները կատարութեամբ և ատելութեամբ լեցուն Փաշխատական այդ դաճանները չեն կարող թուլացնել Կարմիր բանակի անխորտակելի պաշտպանունակութեանը, Կարմիր բանակի, վորին ղեկավարում են վործված զորավարները, Լենինի-Ստալինի կուսակցութեան անեցրած կազմերի,—մեր մեծ հայրենիքի պաշտպանութեան կազմերի,—ծաղիկը։

Ստալինի անվան Կարմրադրոշ՝ Լենինի շքանշանը կրող հատուկ հեծելազորային դիվիզիայի մարտիկները՝ հրամանատարները և քաղաշխատողներն ընկեր Ստալինին ուղղված իրենց նամակում գրում են․

«Փաշխտական ստոր վարձկաններն ուզում էին մեր յերկիրը վերադարձնել և դնել կարվածատերերի ու գործարանատերերի իշխանութան տակ: Նրանք պատրաստում էին մեր կուսակցութան ու կառավարութան առաջնորդների սպանութուններ, պատրաստում էին Կարմիր բանակի սպասուկները ապստամբ պատերազմում: Բայց Փաշխտական դարձելիներին յերբեք չի հաջողվի տիրութուն անել Սորհրդային յերկրում: Ինչ դիմակի տակ էլ վոր նրանք թագնրվեն, ինչքան էլ վոր յերկերեսանութուն անեն Փաշխտային յակեյները, խորհրդային մեծ ժողովուրդը, նրա սիրասուն գավակ Կարմիր բանակը մինչև վերջ կվոչնչացնի այդ նեխված դարձելիութունը: ԽՍՀՄ վոչ մի մարտիկ, վոչ մի ադնիվ քաղաքացի յերբեք չի դնացել և չի դնա գավաճանների հետեից: Բանվորա-դյուրացիական Կարմիր բանակի մարտիկները չեն գավաճանի յերդմանը: Հավիտյան նյովվելու և մոռացվելու յեն այդ լրտեսների անունները, վորոնք յերդում են ամիկ հայրենիքին և միևնույն ժամանակ փորձել են վաճառել նրան»: («Правда», 14 հունիսի 1937 թ.):

Մոսկվայի Պրոլետարական հրացանաձիգ կարմրադրոշ դիվիզիայի մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողներն ընկ. Վորոշիլովին ուղղված իրենց նամակում գրում են.

«Բանվորա-դյուրացիական Կարմիր բանակն ամենաուժեղ բանակն է աշխարհում, նա բանվորների և դյուրացիների միա ու արյունն է: Յեվ պատահական չէ, վոր այդ բոլոր Տուխաչևիսկիները և Յակիրները դորձել են մարտիկներին և հրամանատարներին խիտ դադտնի, պատահական չէ, վոր նրանք թաղցրել են իրենց լրտեսական նենդ գործունեյութան հետքերը: Նրանք չեն կարող վոչ մի աջակցութուն գտնել մասսաների մեջ: Յուրաքանչյուր մարտիկ և հրամանատար անձնուրացորեն նվիրված է իր սիրած հայրենիքին, պատրաստ է ամեն բոպե կովելու խորհրդային մեծ ու հզոր ժողովրդի համար և անպայման վոչնչացնելու թշնամուն»: («Правда», 15 հունիսի, 1937 թ.):

Սորհրդային Միութունն իրավամբ կարող է պարծենալ հրամայեակազմի հիանալի կազմերով, կուսակցական և անկուսակ-

ցական տոկոն բոլշևիկներով, վորոնց դաստիարակել է Կարմիր բանակը, վորոնք աճել են Կարմիր բանակում և պատրաստ են ԽՍՀՄ պաշտպանութան ժողովրդական կոմիտար, Սորհրդային Միութան մարշալ ընկ. Կ. Յե. Վորոշիլովի ղեկավարութամբ մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանելու Լենինի-Ստալինի դորձը:

Պատերազմի հրձիգները, Փաշխտ ազրեսորները մեծ հույսեր էին դրել ժողովրդի թշնամիներին — հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի, Տուխաչևիսկու և այլոց ուղղամ-Փաշխտական լրտեսական խմբակի բանդիտների դիվերսիոն և տեռորիստական գործունեյութան վրա: Փաշխտական ազրեսորների նվաճողական պլանները կազմվել էին տրոցկիստական լրտեսների քայքայիչ աշխատանքի արդյունքների վրա հույս դնելով: Ձարմանալի չէ, վոր յերբ ԽՍՀՄ ներքին Գործերի ժողովրդական Կոմիտարիտոր հայտարերեց լրտեսական բանդան, դուրսները կորցրած Փաշխտական հետախույզները և նրանց տերերը վայրենի վոռնոց բարձրացրին: Գերմանական Փաշխտական թերթերի—«Մեդիկիչեր Բեռլինի» և «Անդրիֆի» եջերում, ճապոնական մամուլի եջերում բարձրացավ մի կատաղի կամպանիա՝ բղավոց-ճղավոց «ԽՍՀՄ թուլութան» մասին, «Մոսկվայում տեղի ունեցող սպասամբութունների» մասին, «Կարմիր բանակի շարքերի քայքայման մասին» մասին և այլն:

Սորհրդային միութան թշնամիները սխալվեցին իրենց հաշիվների մեջ: «Правда»-ն 1937 թվականի հունիսի 14-ի առաջնորդողում իրավամբ գրում է.

«Յերևում է, վոր նրանք մոռանում են, թե Մոսկվան Տոկիո չէ, վորտեղ զինվորականուրքյան ամեն մի խուլքորը ցերեկով սրի յե քաշում մինիստրներին: Բանակում այնպիսի կարգապահութուն, ամբողջ բնակչութան կողմից կառավարութանը ցույց տրվող այնպիսի աջակցութուն, վորպիսիները մենք ունենք ԽՍՀՄ-ում, — չգիտե և չի կարող գիտենալ վոչ մի յերկիր աշխարհում:

Ռեակցիոն մամուլի վայնասունները չեն կարող ծածկել այն ակներև փաստը, վոր մերկացվել ու վիժել են ԽՍՀՄ ներխուժելու Փաշխտական պլանները: Յուրաքանչյուր առողջամիտ մարդ հասկանում է, վոր ԽՍՀՄ-ում Փաշխտական լրտեսների ջախջախումն ու արմատահան անելը, բոլոր վորջերից նրանց դուրս քշելն էլ ամիկ յե բարձրացնում

11-2864297



մեր հայրենիքի ուժը, Կարմիր բանակի հզորությունը: Յերե վորևե մեկը բուլացել է ռազմա-ֆաշիստական բանդայի ջախջախումից, ապա, իհարկե, դա վոչ քե ԽՍՀՄ է, այլ գնդակահարված լրտեսների ֆաշիստ տերերը: Նրանց գլխավոր շտաբի խաղաքաղաքերը հայտարարված են, նրանց կոզիրը խփված է, պարզվել են նրանց ստրատեգիական դիտավորութայունները, հայտնի յեն դարձել նրանց ագրեսիայի ուղղութայունը և պատերազմի պլանները:

Պատճառ ունի կատաղելու գերմանական մամուլը, վոր հակախորհրդային կատաղի կամպանիա յե բացել: Փաշիստ ագրեսորների աճող թուլութայան դեմ կանգնած է մեր աճող ուժը»:

Խորհրդային Միութայան ամբողջ հզորութայամբ կճգմվեն լըրտեսական, դիվերսիոն, վնասարարական ու տեռորիստական բանդաների Փաշիստ տերերը, յեթե նրանք համարձակվեն հարձակվել մեր հայրենիքի վրա: Կարմիր բանակը չի պատրաստվում առաջինը հարձակվելու վորևե մեկի վրա: Բայց յեթե թշնամին վտանգութայուն անի խորհրդային սահմանների դեմ, նա ստիպված կլինի իր վրա զգալ խորհրդային հայրենասիրութայան ամբողջ ուժը, Կարմիր բանակի ամբողջ հզորութայունը, Կարմիր բանակի, վորի հետևում կանգնած է ամբողջ 170 միլիոնանոց խորհրդային ժողովուրդը: Փաշիստ թշնամիները կվոչնչացվեն ու կջնջվեն յերկրի յերեսից:

## ԼԻՆԵԼ ԱԶԱԼՈՒԲՁ, ՍՐԲՈՒԹՅԱՄԲ ՊԱՅԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՅԵՎ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Մոսկվայի «Серп и Молот» («Մուրճ և Մանգաղ») դործարանի բանվոր-ստախանովականներն ընկեր Ստալինին ուղղած իրենց նամակում մատնանշում են, վոր Փաշիստական լրտեսների գատավարութայունը շատ բան սովորեցրեց բանվորներին:

«Մենք նորից ու նորից, ինչպես յերբեք, զգացինք և հասկացանք, թե մեզ վրա վորքան թանգ են նստում անհոգութայունն ու կապիտալիստական շրջապատման մասին մոռանալը, վորոնց մասին Դուք, ընկեր Ստալին, միշտ և անդադար հիշեցնում եք մեզ»: («Правда», 17 հունիսի 1937 թ.):

Խորհրդային Միութայան ժողովրդական մասսաները մի յեղբակացութայուն են անում մեր յերկրում Փաշիստական ագրեսոր-

ների լրտեսական դործակալութայունների մերկացման ու լիկվիդացիայի վաստերից,— հարյուրապատիկ բարձրացնել դասակարգային զգաստութայունը և ուշադրութայունը դեպի մեր հայրենիքի պաշտպանութայունը ԽՍՀՄ-ի նեղ գաղտնի թշնամիներից: Բանվորի սրատես աչքը պետք է շարունակ մտիկ տա իր շուրջը, թույլ չտա, վոր թշնամին կամ նրա դործակալը մի քայլ անգամ մոտենա խորհրդային դործարաններին, մեր սահմաններին, Կարմիր բանակին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխութայան նվաճումներին: Յերբեք չի կարելի մոռանալ, վոր «լրտեսութայունն իր շոշափուկները մեկնում է դեպի պետական հիմնարկութայունները, պաշտպանողական նշանակութայուն ունեցող խոշոր ձեռնարկութայունները, դեպի տրանսպորտը, նպատակ ունենալով թափանցել պետական գաղտնիքի մեջ, իմանալ պաշտպանողական գաղտնիքները, հայտնաբերել տեխնիկական կատարելագործութայունները, կարևորագույն պաշտոններում տեղավորել իր մարդկանց և կազմակերպել վնասարարութայուն, դիվերսիա ու մատնութայուն: Լրտեսութայունը՝ դա քողարկված անընդհատ պատերազմ է, վոր մղում է լրտեսների բանակը և վորը մի ըոպե անգամ չի դադարում»: (Ս. Ուրանով—«Ոտարերկրյա հետախուզութայունների հավաքագրական աշխատանքի մի քանի նեղ դործերաձևերի մասին»):

Յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի իր աչքի լույսի պես պետք է պահպանի պետական ռազմական գաղտնիքը: Անհոգութայունը, զգաստութայան բացակայութայունը և շաղակրատութայունը կարող են ամենածանր վնաս հասցնել մեր հայրենիքին: Անհրաժեշտ է մի անգամ ընդմիշտ վերացնել յուրաքանչյուր խորհրդային աշխատողի (առավել ևս զինվորական գաղտնիքի հետ շփվողի) քեքեամիտ վերաբերմունքը դեպի պաշտոնատարական գաղտնիքները: Յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի պետք է մեշտ հիշի, վոր հաճախ ոտարերկրյա լրտեսութայան աշխատանքը հեշտանում է նրանով, վոր առերյա կյանքում չեն կատարվում գաղտնի վաստաթղթերը և առարկաները պահպանելու ամենատարրական պահանջները, անհոգութայուն է ցուցաբերվում մեր հիմնարկները, դործարանները, կայարանները, պահեստները պահպանելու դործում, միքանի իսկապես վոր անխելք մարդիկ ցանկութայուն են ունենում իրենց բարեկամների ու ծանոթների մոտ պարծենալ իրենց «իրազեկութայամբ», կողմնակիցների ներկայութայամբ տեղի յեն ունենում գաղտնի խոսակցութայուններ, հետախոսով լինում են խոսակցութայուններ գաղտնի թեմաների շուր-

Չը, բացակայում է դատարակչական աշխատանքը վոչ միայն աշխատող քաղաքացիներին, այլև նրանց ընտանիքներին անդամներին մեջ:

ԽՍՀՄ-ում ուղմական զաղանիքի պահպանումը պետք է հասցնել այնպիսի բարձրության, ինչպիսին այն չէ դառնում վոչ մի յերկրում: Վոչ մի պարսպ հետաքրքրություն, վոչ մի ավելորդ բառ այն հարցի շուրջը, վոր պետական ուղմական զաղանիք է հանդիսանում, — ահա թե ինչ պետք է միշտ հիշել յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի: Լինել միշտ ազնիվ իր հայրենիքի և խորհրդային իշխանության նկատմամբ, լինել զգաւտ խորհրդային Միութեան գաղտնի քշմամիներին բոլոր նենգ գործելիքների հանդեպ, — ահա յուրաքանչյուր խորհրդային քաղաքացու սրբազան պարտքը:

Փաշխտ ազրեսորներն որակարգում դրել են աշխարհի վերաբաժանման հարցը: Նրանք ձգտում են ի հաշիվ Խորհրդային Միութեան լուծել կապիտալիստների միջև յեղած հակասությունները:

Խորհրդային անծայրածիր յերկրի մի ծայրից մինչև մյուսը թնդում է դեպի արշուտոտ չարագործները, Փաշխտական լրտեսները և հայրենիքի դավաճանները ժողովրդի ցուցաբերած զայրույթի, ատելութեան և արհամարհանքի ահարկու ձայնը: Հունիսի 15-ին «Правда»-յում տպվեց Լենինյան յերկաթուղու Մոսկվա—Սորտիբոլոնայա կայարանի դեպոյի բանվորների բանաձևը: Բանաձևում ասված էր. «Ի պատասխան թշնամիների և հայրենիքի դավաճանների փորձերի—սասանել ԽՍՀՄ հզորութեանն ու պաշտպանունակութեանը, դիմում ենք խորհրդային կառավարութեանը և խնդրում բաց թողնել նոր փոխառութեան, — «ԽՍՀՄ պաշտպանութեան փոխառութեանը»\*):

Միտինդներում ու ժողովներում հոգուտ նոր փոխառութեան բաց թողնելու քվեարկել են մոտ 30 հազար յերկաթուղայիններ: Այս առաջարկը Չերմ արձագանգ գտավ ամբողջ յերկրում: Բանվորները, կոլտոտեսականները, ինժեներները, պրոֆեսորները, Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի հրամանատարներն ու մարտիկները փողեորութեամբ պաշտպանում են յերկաթուղայինների առաջարկը:

\*) Ինչպես հայտնի յե՝ կառավարութեանն արդեն կատարել է խորհրդային ժողովրդի այդ ցանկութեանը և արդեն բաց է թողել «ԽՍՀՄ պաշտպանութեան փոխառութեանը»: Մանոք. հայ. կրատ. խմբ.:

«ԽՍՀՄ պաշտպանութեան փոխառութեանը» — ահա բազմամիլիոն խորհրդային ժողովրդի պատասխանը տրոցկիստական-բուխարինյան Փաշխտական լրտեսներին և հայրենիքի դավաճաններին ստոր չարագործութեաններին, պատերազմի Փաշխտ հրձիղների բոլոր պրովոկացիոն դիտավորութեաններին:

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՖԱՇԻՍԱՏ ՇՐՁԻԳՆԵՐԸ ԳՈՐԾԻ ՎՐԱ ՅԵՆ

Ամբողջ աշխարհի ժողովրդական մասսաներն անհանդսութեամբ և հուսով հետևում են իսպանական ժողովրդի հերոսական պայքարին, վոր նա մղում է ազատութեան և ազդային անկախութեան համար: Նրանք շատ լավ են հասկանում, վոր «Փաշխտ օեակցիոններին ճնշումից իսպանիայի ազատագրումն իսպանացիների մասնավոր գործը չէ, այլ ամբողջ առաջավոր և առաջադեմ մարդկութեան գործն է»: (Ստալին):

Ամբողջ աշխարհի ժողովրդական մասսաները յերբեք չպիտի մոռանան, վոր առանց ձևականորեն պատերազմ հայտարարելու ճասպանական ուղմամոյների բանակները ներխուժեցին Մանջուրիա և Հյուսիսային Չինաստան, սկսվեց իտալական Փաշիզմի ավազակային պատերազմը հարեչական ժողովրդի դեմ և առանց ձևականորեն պատերազմ հայտարարելու դերմանական և իտալական Փաշիզմը հարձակվեց իսպանական ժողովրդի վրա: Փաշխտ ազրեսորներն որակարգում դրել են աշխարհի վերաբաժանման հարցը: Նրանց քայքայիչ աշխատանքը վոչ-Փաշխտական յերկիրներում, վորոնք կողմնակից են խաղաղութեան պահպանելուն, է՛լ ավելի յե սրում հակասութեաններն իմպերիալիստական բանակում: Փաշխտ ազրեսորները հուշս ունեն հանկարծակի հարձակումով հող պատրաստել «մեծ պատերազմի» համար, հարված հասցնել կոլեկտիվ անվտանգութեանը և թույլ յերկիրների անվտանգութեան զգացմունքին: Այդ նպատակով նրանք մինչև անգամ կանգ չեն առնում այն բանի առաջ, վոր խղեն հենց իրենց ստորագրած պայմանագրերն ու համաձայնութեանները, խախտեն իրենց միջազգային պարտավորութեանները (Ազգերի Լիգայից դուրս դալը) և իրենց ուղմական տեխնիկան ու մոտորացրած դիվիզիաները նետեն ոտար տերիտորիաները: Փաշխտ ավազակներն իրենց զազրելի հանցագործութեանները կատարում են բուրժուական օեակցիոն շրջանների աջակցութեամբ և մյուս կապիտալիստական յերկիրների բուրժուական դեմոկրատիայի թուլլտվութեամբ:

Ընկ. Դիմիտրովն իր՝ «Միջազգային պրոլետարիատի միասնու-  
թյունը ներկա մոմենտի բարձրագույն հրամայական պահանջն է»  
հոդվածում (տե՛ս «Կոմունիստիչեսկի Ինտերնացիոնալ» ժուռնալի  
№ 5, 1937 թ. մայիս) իրավամբ մատնանշում է, վոր

«Չնայած պատերազմի այդ հրձիգների շահերի դոյու-  
թյունը ունեցող տարբերությանը, նրանք միավորյալ ջանքե-  
րով խարխլել աշխատանք են կատարում վոչ-Փաշխտական  
յերկիրներում, — վորոնք կողմնակից են խաղաղությունը  
պաշտպանելուն, — ամեն կերպ ոժանդակում են այդ յերկիր-  
ների ուսակցիոն կուսակցություններին և խմբերին, կազմա-  
կերպում են հեղաշրջումներ իրենց համար և իրենց նպատակ-  
ների համար անհարմար կառավարություններին և ուժիմների  
դեմ, ամենուրեք հակահեղափոխական անարխիստ յեն սերմա-  
նում: Նրանց հանցավոր ձեռքը կարելի յե տեսնել Փրանսիա-  
յում Դե-լյա Ռոկի և Դորիոյի, Բելգիայում Դեգրելի, Չեխո-  
սլովակիայում Գեյնլեյնի դավաճանական դործունեյության  
մեջ, Սկանդինավյան և Բալկանյան յերկիրներում, Հունգա-  
րիայում, Լեհաստանում և Մերձ-Բալտյան պետություննե-  
րում Փաշխտների մեքենայությունների մեջ, Չինաստանի  
ճապոնասիրական տարրերի քաղաքականության և Ամերիկայի  
Միացյալ Նահանգներում Հերստի\*) շրջանների դործողու-  
թյունների մեջ:

Կենսականորեն շահագրգռված լինելով Փաշխտական ազ-  
րեսիայի հանդեպ ժողովուրդների պաշտպանունակության  
թուլացումով, բանվորական շարժման կազմալուծումով և  
կազմավորվող ժողովրդական ճակատի վիժումով՝ Փաշխտ  
ազրեսորներն այդ նպատակով ամենուրեք ողտադործում են  
տրոցկիստներին իբրև իրենց դործակալությունը: Նրանք  
իրենց հովանավորության տակ են վերցնում ԸՊ Ինտերնացիո-  
նալը, — անեղատների, բանվոր դատակարգի մատնիչների  
և վոստիկանական պահնորդական բաժինների դործակալների  
այդ խառնիճադանճ՝ խմբակցությունը: Փաշխտների կատա-  
ղությունն առանձնապես ուղղված է Որհրդային Միության,  
— սոցիալիզմի մեծ յերկրի դեմ, խաղաղության, ամբողջ  
մարդկության ազատության ու առաջադիմության այդ հզոր  
պատվարի դեմ, Փաշխտական ազրեսիայի ճանապարհին  
կանգնած այդ մեծագույն խոչընդոտի դեմ»:

\*) Հերստը ԱՄՆ-ի ուսակցիոն մամուլի ղեկավարն է:

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՖԱՇԻՉՄԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՍԵՆԱՎՈՒԹԵՐԻՄ ԹՇՆԱՄԻՆ Ե

Ճապոնիայի հարձակումը Չինաստանի վրա և խաղաղական Փա-  
շիզմի կողմից Հարեչտոանի բռնադրավումը թխավորեցին պատե-  
րազմի դերմանական հրձիգներին: Սրանք տեսան, վոր Ազգերի  
Լիգան անզոր է իրենց խանդարելու, վոր կապիտալիստական  
մյուս յերկիրների միջև յեղած հակասությունները վոչ թե հարթ-  
վում, այլ դնալով այնքի յեն սրվում: Նրանք համոզվեցին, վոր  
ճապոնական և խաղաղական ազրեսիայի շուրջը տեղի յե ունենում  
գլխանաղխտական ապարդյուն աղմուկ, վորը վոչ վոքի չի սպառ-  
նում և իրականում չի խանդարում, այլ աջակցում է ճապոնական  
ուղղամտությանը և խաղաղական Փաշիզմին: Փաշխտական դեր-  
մանիան այդ ժամանակ վորոշում է, վոր հասել է ժամանակը  
Վերսայլի դաշնադիրը պատուելու և բացահայտ կերպով իր ուղ-  
մական հորրության ուժեղացումը սկսելու համար: Այդ նույն  
ժամանակ բոլոր վոչ-Փաշխտական յերկիրներում սկսեց յեռան-  
դով աշխատել Փաշխտական Գեստապոյի\*) դործակալությունը,  
ամեն կերպ խարխլելով այդ յերկիրների պաշտպանական հզորու-  
թյունը և բաղաներ ստեղծելով լրտեսության, դիվերսիաների ու  
տեռորիստական ակտերի համար:

«Գերմանական Փաշիզմը հանդես է գալիս իբրև միջազ-  
գային հակահեղափոխության հարվածային բուռնցք, իբրև  
խմբերիալիստական պատերազմի գլխավոր հրձիգ, իբրև  
Որհրդային Միության — ամբողջ աշխարհի աշխատավորների  
մեծ հայրենիքի — դեմ խաչակրաց արշավանքի նախաձեռ-  
նող»: (Դիմիտրով):

Փաշխտական Գերմանիան դարձել է ուղղմական ճամբար:  
Գերմանական ամբողջ տնտեսությունը յենթարկված է մի նպա-  
տակի — «մեծ պատերազմին» տենդորեն պատրաստվելուն: «Յու-  
ղի փոխարեն թնդանոթներ» — այդպես է ժամանակակից Գերմա-  
նիայի լոզունդը: Փաշխտական գլխանաղխտությունը սկսեց բա-  
ցահայտորեն արհամարհանք ցուցադրել դեպի միջազգային դաշ-  
նազրերը, դիվանաղխտական ճանապարհով նախապատրաստելով  
պատերազմի սկիզբն առանց այն ձևականորեն հայտարարելու:

\*) Գեստապոյ — Գերմանիայի պետական դադտնի վոստիկանությունը, գեր-  
մանական Փաշխտական պահնորդական բաժինը:

Ֆաշիստական Գերմանիան իր բոլոր ավազակային հաշիվները հիմնում է առանց ձևականորեն պատերազմ հայտարարելու պատերազմ սկսելու վրա, չեզոքութունը խախտելու հնարավորության, պայթարի քեմիական միջոցների հանցավոր ոգտագործման, քաղաքների խաղաղ բնակչուցությունը վոչնչացնելու վրա: Իզուր չէ, վոր Հիտլերը Ֆաշիստական կուսակցության Նյուրենբերգյան համագումարի ժամանակ, 1935 թվականի սեպտեմբերին, կազմակերպված բանկետում՝ իր ճառում ասել է.

«Յեթե յես յերբեիցե ուզենամ հարձակվել թշնամու վրա, յես դա այլ կերպ կանեմ, քան Մուսսոլինին: Յես ամսվա ընթացքում բանակցութուններ չեմ վարելու և պատրաստութուններ տեսնելու, այլ, ինչպես յես միշտ վարվել եմ իմ կյանքում, հանկարծակի կսլանամ իմ թշնամու վրա, ինչպես գիշերային խավարում փայտատկած կայծակ»:

1935 թվականի մարտի 16-ի որենքով Հիտլերը վերացրեց վերսայի դաշնագրի\*՝ ռազմական սահմանափակումները: Դրանից անմիջականորեն հետո Ֆաշիստական Գերմանիան (1936 թվականի մարտի 7-ին) իր զորքերը մտցնում է Հռենոսի համեմատաբար սպառազմականացված (գեմիլիտարիզացիայի յենթարկված) դոտին և դրանով Յեվրոպայում գլավորեն ուժեղացնում է իր ստրատեգիական դրությունը:

1935 թվականի սեպտեմբերին, Ֆաշիստական կուսակցության արդեն հիշատակված Նյուրենբերգյան համագումարի ժամանակ, կազմակերպվեց հսկայական ռազմական զորահանդես՝ մասնակցությամբ բազմաթիվ տանկային զորամասերի և ռազմական զորեղ ավիացիայի: 1935 թվականի նոյեմբերին տեղի յե ունենում 1914 թվականի ծնվածների առաջին զորակոչը: 1935 թվականի հուլիսի 1-ին վերականգնվում է գերմանական գլխավոր շտաբը: Ֆաշիստական Գերմանիան բացահայտորեն հայտարարում է, վոր նա մտադիր է ծավալելու բանակը և ունենալու 12 կորպուս կամ 36 դիվիզիա:

1937 թվականի սկզբին այդ ծրագիրն արդեն գերազանցված

\* Վերսայի դաշնագրի համաձայն, վոր կնքել էյին հաղթող պետութունները—Ֆրանսիան, Անգլիան և այլն, հաղթված Գերմանիայի հետ, վերջինս իրավունք ուներ պահելու միայն սահմանափակ քանակությամբ զորք, ունենալու սպառազինման միայն առանձին տեսակներ և այլն: Բացի դրանից, Ֆրանսիային սահմանակից Հռենոսյան մարզում Գերմանիան չէր կարող ունենալ իր զորքերը: Ծանոթ. խմբ.:

եր: Գերմանական բանակի շարքերում արդեն կար մոտ 1· 300 հազար հողի, վորոնց թվում 240 հազար հողի ռազմական ուսուցումն աշխատանքային ճամբարներում անցնող, 30 հազարը—քաղաքական վոտսիկանության շարքերում և 80 հազարը—պահեստի զինվորներ, վորոնք ռազմական ուսուցումն անցնում են առանձին զորամասերում: Գերմանական բանակն իր քանակով հասել է կապիտալիստական յերեք խոշոր պետութունների,—Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի—բանակներին:

Սպառազինումների այդ ծրագրի իրագործումը և բանակի հետագա ծավալումը հսկայական ծախքեր են պահանջում: Անգլիական բանակային շրջանների որդան «Բենկերի» տվյալների համաձայն (1937 թվականի փետրվար)՝ Ֆաշիստական Գերմանիան 4 տարում սպառազինումների վրա ծախսել է 31,1 միլիարդ մարկ, ունենալով բյուջական ընդհանուր ծախքեր 57,4 միլիարդ մարկ: Սպառազինվելու արագընթացության մեջ առաջնության դափնին պատկանում է գերմանական Ֆաշիզմին, և տարեցտարի աճում են նրա սպառազինման ծախքերը:

Ա.Ա. «ԲԵՆԿԵՐԻ» ԲԵՐԱՇ ՅՈՒՑԱՆՇԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ—

Թվականներ	Ընդհանուր ծախքեր միլիարդ մարկով*)	Սպառազինման ծախքեր
1933/34 . . . . .	9.700	3.000
1934/35 . . . . .	12.200	5.500
1935/36 . . . . .	16.700	10.000
1936/37 (նախնական տվյալներ)	18.800	12.600
Ընդամենը . . . . .	57.400	31.100

Ֆաշիստական Գերմանիան այդ միջոցները հավաքում է յերկրի ժողովրդական մասսաների հրեշտավոր շահագործման հաշիվին, կիսաբազմ զիճակում գտնվող բանվորների և գյուղացիների կենսական մակարդակը հսկայական չափով իջեցնելու հաշիվին: «Մեծ պատերազմի» նախապատրաստության նպատակներին են ծառայում՝ ամենասանձարձակ սպիտակ տեղորը, գերմանական ժողովրդի լավագույն զավակների մահապատիժները, խոշտանդումներն ու համակենտրոնացման ճամբարները:

Պետական ամբողջ սպարատը և Ֆաշիստական կուսակցութունն ամբողջովին բռնել են այնպիսի ուղղութուն, վորպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում ապահովեն Ֆաշիստական Գերմանիայի ռազմական գերակշռութունը նրա սպառազակորդների նկատմամբ:

\*) 1 մարկը հավասար է 37 կոպեկի:

Փաշխտական Գերմանիան ձգտում է իր ղեկավարութեամբ համարել պետութիւնների Փաշխտական բլոկ: Վորպես առաջին պարանյոր, գերմանական Փաշխտները գտան ճապոնական ուղղմանում իրենց: Դրանում դարձանալի վոչինչ չկա: Ճապոնական ուղղմանում իրենց չինական հողերը, նույնպէս իր ազդեանքն քողարկում է կոմունիզմի դեմ պայքարելու աղաղակներով, յերազում է ճապոնական մեծ կայսրութիւնը ստեղծել՝ Պրիմորյէյց մինչև Ուրալ: Ճապոն-գերմանական ուղղման դաշինքը պետք է ապահովեր թե՛ Արեւմուտքում և թե՛ Արեւելքում ԽՍՀՄ դեմ միաժամանակ պատերազմ մղելու հնարավորութիւնը: Գերմանական Փաշխտները չեն թաղցնում իրենց այն հուսերը, վոր յեթե ճապոնիային հաջողվի առաջինը հարձակվել ԽՍՀՄ վրա, այն ժամանակ Գերմանիան կկարողանա Լեհաստանի վրայով հեշտութեամբ ներխուժել խորհրդային տերիտորիան:

### ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԻՏԱԼԻԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՑԱՇԻՋՄԻ ԴԱՇՆԱԿԻՑՆ Ե

Այդ նույն հակախորհրդային դժով տեղի յե ունենում մերձեցում Գերմանիայի և Իտալիայի միջև: Չնայած այն լուրջ հակասութիւններին, վոր կան Փաշխտական Իտալիայի և հիտլերյան Գերմանիայի միջև (հակասութիւններ Դանուբյան և Բալկանյան Յելրոպայում)՝ յերկու ազդեասորները հեշտութեամբ հակախորհրդային լեզու դասն: Իտալական և գերմանական Փաշխտները միատեսակ շահագրգռված են իսպանական ժողովրդական ճակատի ջախջախումով, Խորհրդային Միութեան միջազգային հեղինակութեան թուլացումով, Խորհրդային Միութեան, վորն իր հետևողական ու վճռական խաղաղութեան քաղաքականութեամբ փայլուն կերպով ցուցաբերում է, վոր բանվորները և դուրդացիները սոցիալիստական պետութիւնն իր դարգացման համար ուրիշ տերիտորիաներ գրավելու և թալանչիական պատերազմի կարիք չի գգում:

«Վոչ մի կասկած չկա, վոր Գերմանիայի և Իտալիայի Փաշխտ կառավարչները և ճապոնիայի Փաշխտ ուղղմանում արդեն վառած կլինեն ճամաշխարհային պատերազմի հրդեհը, յեթե չլինեն խաղաղութեան այնպիսի մի հուսկու յերկիր, ինչպիսին Խորհրդային Միութեանն է, յեթե

միջազգային պրոլետարիատի շարքերում տեղի չունենային լուրջ տեղաշարժեր Փաշխտի դեմ պայքարն ուժեղացնելու և միասնական ժողովրդական ճակատ ստեղծելու ուղղութեամբ, յեթե իսպանական ժողովուրդը չկարողանար այնքան հերոսաբար հետ մղել Փաշխտի գրոհները, յեթե Ֆրանսական պրոլետարիատը չստեղծեր հակափաշխտական ժողովրդական ճակատ ու յեթե չինական ժողովուրդը չընթանար ճապոնական զավթողների դեմ յեղած համազգային ճակատում իր ուժերը միավորելու ճանապարհով»: (Գ. Դիմիտրով — «Միջազգային պրոլետարիատի միասնութիւնը ներկա մոմենտի բարձրագույն հրամայական պահանջն է»: Տես «Կոմունիստիչեսկի Ինտերնացիոնալ» ժուռնալի 1937 թ. մայիսի № 5-ը):

Տիրահուշակ «Հոռոմ—Բեռլին առանցքը» հանդիսացավ իտալ-գերմանական համագործակցութեան արտահայտութիւն՝ պատերազմի և ազդեասի չհամար: «Հոռոմ—Բեռլին առանցքը» նշանակում է, վոր գերմանական և իտալական Փաշխտը ձգտում է քայքայել կոլեկտիվ անվտանգութեան սխտեմը և իր համար ապահովել գործողութիւնների լիակատար ազատութիւն: Այդ նպատակի համար Գերմանիան և Իտալիան փորձում են, փոխադարձ զիջումներով, դեպի Հարավ-Արեւելյան Յելրոպա Գերմանիայի թափանցման ակտիվորեն դիմադրելուց Իտալիայի ժամանակավորապէս հրաժարվելու ճանապարհով, Միջերկրական ծովում իտալական ազդեասիվ դիտալորութիւններին Գերմանիայի կողմից աջակցելու ճանապարհով ապահովել պլացդարմերի (զինադաշտերի) նախապատրաստութիւնն ապագա «մեծ պատերազմի» համար: Այսպիսով, դիվանդիտական «Հոռոմ—Բեռլին առանցքը», վորի համար պրոպագանդա յե մղում Փաշխտական ամբողջ մամուլը, հանդիսանում է մի գործիք, վորն ուղղված է կոլեկտիվ անվտանգութեան և ընդհանուր խաղաղութեան դեմ, հանդիսանում է զավթողական պատերազմի նախապատրաստութեան անմիջական գործիքը:

Փաշխտական Գերմանիային անհրաժեշտ է մերձենալ Փաշխտական Իտալիային, վորպէսզի նա, Գերմանիան, իրականացնի իր փայտիայած քաղաքականութիւնը Ցրանիան շրջապատելու, Փոքր Անտանտան պառակտելու, Չեխոսլովակիայի վրա ճնշում գործադրելու, խարխուղ աշխատանք ծավալելու այն բոլոր յերկիրներում, վորոնք նշված են իբրև զավթողական պատերազմի

պլանցարմեր (գինազաշտեր) : Իր հերթին Փաշխատական Գերմանիան ձգտում է ունենալ յեւք գեպի Միջերկրական ծովն ու Աստուրայան ուղիքանոսի արեւելին հենակետեր ստեղծելու իր ուղղական նախատորմի համար (Իսպանական Մարոկկո և Կանարյան կղզիներ) :

Փաշխատական Իտալիան համադորձակցելով Փաշխատական Գերմանիայի հետ Միջերկրական ծովում իշխելու պայքարում, հույս է ունեցել ուժեղացնելու իր գերքերը բրիտանական իմպերիալիզմի դեմ, իսկ Յեվրոպայում—Ֆրանսիայի դեմ : Բացի դրանից, ինչպես արդեն մատնանշվել է, յերկու ագրեսորներին միաժողովում է նրանց ընդհանուր ատելութունը դեպի Սորժալային Միութունը,—խաղաղության հզոր դործոնը : Այս հիմունքով ատելի ունեցավ իտալո-գերմանական ուղղակի դաշինքի կնքումը,—մի դաշինք, վոր Փաշխատագրեսորները կողմից «մեծ պատերազմ» նախապատրաստելու հետեյալ ետապն է նշանակում :

Իր սպառազինումներով Փաշխատական Իտալիան հետ չի մընում իր դաշնակցից ու պարտնյորից—Փաշխատական Գերմանիայից : Իտալիայի Փաշխատական կառավարութունը, Հարեչատանում ավազակային պատերազմ սկսելով, կազմակերպեց կանոնավոր բանակի յոթը նոր դիվիզիա և սե շապկավորները (Փաշխատական միլիցիայի) նույնպես յոթը դիվիզիա : Վերջին յերկու տարում Իտալիայում յերեան յեկան նաև մասնակիորեն և ամբողջովին մոտոմեխանիզացիայի յենթարկված միջանի դիվիզիաներ : Ոտարերկրյա, մասնավորապես գերմանական մամուլի տեղեկութուններով, իտալական զինված ուժերը ներկայումս բաղկացած են 13 կորպուսից կամ 39 դիվիզիայից : Այդ դորքերը կազմում են այսպես կոչված՝ արքայական բանակը և բաղկացած են մինչև 400 հազար հողուց : Բացի դրանից, կա նաև դադութան յին բանակ,—մինչև 100 հազար հողի, և Փաշխատական «աղբային անվտանգության միլիցիա» (սե շապկավորները)—մինչև 250 հազար հողի :

1937 թվականի սկզբում Փաշխատական Մեծ Խորհրդի նստաչըջանում Մուսսոլինին հրապարակեց իտալական սպառազինումների ուժեղացման նոր ծրագիրը : Այդ ծրագրում նորից ընդգրծվեց, վոր յերկրի ամբողջ կյանքը պետք է յենթարկվի «մեծ պատերազմի» պատրաստվելու շահին : Բավական է մատնանշել, վոր Փաշխատական Մեծ Խորհրդի վորոշման կետերից մեկն ասում է.—«կատարել ազգի 18-ից մինչև 55 տարեկան հասակ ունեցող բոլոր ակտիվ ուժերի միլիտարիզացիա (ուղղակիանացում), պարբե-

րաբար զորակոչելով մորելիզացիայի յենթարկվող կոնտինգենտները» : Կարճ ասած՝ Փաշխատական Մեծ Խորհրդի վորոշումը աստորեն հենց այժմ ամբողջ յերկիրը փոխադրում է պատերազմական դրության : Մուսսոլինին հայտարարեց, թե խաղաղ ժամանակվա կադրային (բուն, հիմնական) բանակը «կարճ ժամանակամիջոցում, սոսկ արքայական հրամանով» կարող է ավելանալ—դառնալ մի քանի միլիոն հողի : Իտալիայի ուղղակի բյուջեն 1937—38 թ. թ. հասավ 5·639 միլիոն լիրայի, նախորդ տարվա համեմատությամբ ավելանալով 727 միլիոն լիրայով :

## ՃԱՎՈՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՄՈՒՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՆԴՈՐԵՆ ՍՊԱՌԱԶԻՆՎՈՒՄ Ե

Ճապոնական ուղղամտութունը, իր զավթողական դործողութուններով սրելով Հեռավոր Արևելքի դրությունը, նույնպես հայտարարում է, թե առանց սպառազինումներն ավելացնելու Ճապոնիան չի կարող իրականացնել «անխղելի կապերը Մանջուուրոյի հետ» և «Ջինաստանի ու ԽՍՀՄ հետ հարաբերութունները կանոնավորելու քաղաքականութունը» : Ճապոնիայի ուղղակի ծախքերը շարունակ աճում են,—1933 թվականին 820 միլիոն իյեն\*), 1935 թ.—1·022 միլիոն, 1936 թ.—մինչև 1·059 միլիոն և 1937 թ.—1·500 միլիոնից ավելի իյեն : Ճապոնական ուղղակի ծախքերն այժմ կազմում են պետական ամբողջ բյուջեյի մոտ 60 տոկոսը, իսկ յեթե հաշվի առնենք նաև դադոնի Փոնդերը, ապա ավելի շատ : Ճապոնական ուղղակի մինիստրութունը մշակել է «սպառազինումների լրացման» հատուկ պլան 6 տարվա հաշվով (1937—1942 թ.թ.) : Այդ պլանով ծախքերը հաշվվում են 3 միլիարդ իյեն : Այդ նշանակում է, վոր «նորմալ բյուջեյին» ամեն տարի ավելանալու յե 500-ական միլիոն իյեն «լրացուցիչ» ուղղակի ծախքերի համար :

Ճապոնական ուղղամտութունը, վոր դաշինք է կնքել գերմանական Փաշիզմի հետ, ինչպես և վերջինս, չի ուզում սպառազինումների բնազավառում վորեև սահման և խոչընդոտ ճանաչել : Ճապոնիայի ուղղակի մինիստրության վերջին ծրագիրը նախատեսում է, վորպես լրացում դոյութուն ունեցող 17 հեռակ դիվիզիաներին, կազմակերպել 8 նոր դիվիզիա, այլ կերպ ասած՝ մեկ ու կես անգամ ավելացնել բանակը : Ճապոնական տնտեսու-

\*) 1 իյենը հավասար է 35 կոպեկի :



Թյունը յենթարկվում է պատերազմի շահերին: Լինելով անսեսա-  
պես թույլ յերկիր, ստիպված լինելով հումք ներմուծել արտա-  
սահմանից, ձապոնիան, ինչպես նաև Ֆաշիստական Գերմանիան,  
հիմնականում զարգացնում է արդյունարերության այն ճյուղերը,  
վորոնք անհրաժեշտ են սպառազինումների ծրագրին իրադրծելու  
համար: 1937 թվականին համապատասխան դործարանների ար-  
տադրական կարողությունը կհասցվի տարեկան 3000—3500 ինք-  
նաթիուի և 10000—12000 մոտորի, 1600—1700 տանկի, 1500 զրա-  
հապատ ավտոմոբիլի, 10000 հրետանային թնդանոթի և 150000  
գնդացիների:

Գերմանական, իտալական ու ճապոնական սպառազինումների  
տեներային աճումն առաջ է բերում ռազմական ծախքերի աճում  
նաև մյուս կապիտալիստական յերկիրներում: Անգլիական կառա-  
վարության լույս ընծայած «Սպիտակ գերքը» անգլիական սպա-  
ռազինումների ծախքերը վորոշել է 1,5 միլիարդ ֆունտ ստեր-  
լինգ\*):

Գլխադալախարայի մոտ իտալական եքսպեդիցիտն կորսուած  
ջախջախումից հետո գերմանական և իտալական Ֆաշիզմը նոր  
գինված ուժեր և ուղարկում իսպանական ժողովրդի դեմ: Փա-  
շիստական Գերմանիան շարունակում է Չեխոսլովակիայի վրա  
հարձակում պատրաստել, փորձում է վերացնել Ալստրիայի ինք-  
նուրույնությունը, Ֆաշիստական հեղաշրջումներ է պատրաս-  
տում Բելգիայում և մի շարք ուրիշ յերկիրներում: ձապոնական  
ռազմամոլությունը ձգտում է ամրապնդել իր ռազմա-Ֆաշիստա-  
կան գրիտատուրան, վորպեսզի իրեն ազատ զգա ասիական մայր  
ցամաքում նոր բռնազրավումներ կատարելու համար, Ֆաշիստա-  
կան Իտալիան, չնայած հարեչական խաղաղ ժողովրդի դեմ կա-  
տարած արյունոտ բռնություններին, անզոր է նպահելու և իրեն  
յենթարկելու Հարեչատանը: Հարեչատանում պատերազմը շարու-  
նակվում է, վորը համառ բնույթ է կրում և քիչ զոհեր ու դրամ  
չի կլանում Իտալիայից: Իտալական ժողովրդին էժան չի նստում  
նաև Ֆաշիստական ինտերվենցիան Իսպանիայում:

### ՄԱՍՆԱԿԱՆ ՃԱԿՏՈՎ ՊԱՅՔԱՐԵԼ ՑԱՇԻՉՄԻ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳԵՄ

Փաշիստ մարդակերները վառված ջահերով սլանում են աշ-  
խարհի վառոդանկուղների մոտով, ձգտելով նոր մեծ պատե-  
րագմի հրդեհ առաջացնել:

\*) 1 ֆունտ-ստերլինգը հավասար է 26 ո. 10 կոպեկի:

«Ներկա ժամանակաշրջանում պատմությունը միջազգային  
պրոլետարիատի վրա դնում է մի մեծ միսսիա (առաքելու-  
թյուն)—մարդկությունը փրկել Ֆաշիզմի բարբարոսությու-  
նից, նրա պատրաստած նոր իմպերիալիստական սպանդի  
սարսախներից:

Ոգնել իսպանական ժողովրդին՝ ազատվելու Ֆաշիստ  
բռնակալներից և ինտերվենտներից, ոգնել գերմանական և  
իտալական ժողովուրդներին՝ շարզուփուր անելու Ֆաշիս-  
տական ուժիմի շղթաները, ոգնել չին ժողովրդին՝ ճապոնա-  
կան զավթողների դեմ նրա մղած պայքարում, ոգնել փոքր  
ազգերին՝ պաշտպանելու իրենց ազատությունն ու անկա-  
խությունը, Արևմուտքում և Արևելքում ստեղծել անառիկ  
բարյեր (արգելազիծ) Ֆաշիստական ազրեսիայի դեմ,—ահա  
սովյալ ետապում միջազգային պրոլետարիատի պատմական  
միսսիան կատարելու կոնկրետ ուղին: Ցել այդ միսսիայի  
կատարումը միանգամայն համապատասխան է նրա ուժերին,  
յեթե նա դործի միանաբար և կազմակերպված»: (Գ. Դիմի-  
տրով.—Միջազգային պրոլետարիատի միասնությունը ներ-  
կա մոմենտի բարձրագույն հրամայական պահանջն է»: Տես  
«Կոմունիստիչեսկի Ինտերնացիոնալ» ժուռնալ № 5, 1937 թ.  
մայիս):

Ազգերի Լիգայի և իսպանական դործերին «չմիջամտելու Լոն-  
դոնի կոմիտեի» որինակը ակնբախ կերպով ցույց է տալիս, վոր  
վոչ մի հորդորանք չի կարող զսպել պատերազմի Ֆաշիստ հըր-  
ձիգներին: Փաշիստ ազրեսորների ձեռքից վառվող ջահը խելուռ  
համար կա միայն մի ներդործուն միջոց. դա միջազգային պրո-  
լետարիատի դործողությունների միասնությունն է, պրոլետա-  
րիատի, վոր իր շուրջն է համախմբում բոլոր աշխատավոր խա-  
վերին, բոլոր առաջադեմ, գեմոկրատ տարրերին, խաղաղության  
բոլոր իսկական կողմնակիցներին:

Իր «Արմերիայի դասերը» հողվածում\*) գերմանական Ֆաշիստ-  
ների չլսված պրոփոկացիայի և իսպանական նավահանգստային  
քաղաք Արմերիայի ոմբակոծության առթիվ,—վոր կատարել էր  
գերմանական ռազմական նավատորմը,—ընկ. Դիմիտրովը գրել է.

\*) «Պրավդա», 3 հունիսի 1937 թ.:

«Ճշմարիտ վոր հարկավոր է քաղաքական կույր լինել» վորպեսզի մարդ չտեսնի, թե ինչպիսի հսկայական նշանակութուն և ինչ հետեանքներ կունենար բանվոր դասակարգի և նրա կազմակերպությունների միահամուռ հարձակումը յուրաքանչյուր յերկրում և ամբողջ աշխարհում: Այդպիսի յելույթի միջոցով կարելի յեր շարժել և մոբիլիզացիայի յենթարկել ամենալայն ժողովրդական մասսաներին: Անդրևական պահպանողականները, վոր հովանավորում են Հիտլերի ու Մուսսոլինիի մեքենայութունները, պատին սեղմված կլինեյին: Անդրևական ու Փրանսական կառավարութունները ստիպված կլինեյին յեռանդուն միջոցներ ձեռք առնել ղերմանական և խտալական Փաշիզմի ինտերվենցիայի դեմ: Կարելի կլինեյր Իսպանիայից հեռացնել տալ ղերմանական և խտալական ղինված ուժերը, իսպանական ջրերից հեռանալ ինտերվենտների ռազմանավերը: Կարելի կլինեյր հասնել այն բանին, վոր Փաշիստական ինտերվենտներին ու նախաձողներին կսկսեյին ղիտել, ինչպես արժանի յեն նրանք, իբրև ազբեսորների, ավազակների, ծովահենների: Ամբողջ աշխարհում բանվոր դասակարգի միահամուռ յելույթն իսպանական հանրապետութան և նրա հերոսական մարտիկներին համար կապահովեր վոչ միայն անսահման բարոյական, այլև վիթխարի նյութական ողնութունը: Այս ամենը, անշուշտ, կառաջացներ իսպանական ժողովրդի հաղթանակը: Վերջապես, ամբողջ աշխարհի առաջադեմ ուժերի միահամուռ ղրոհով կարելի կլինեյր սանձահարել պատերազմի հրձիգներին»:

II և Ամստերդամի ինտերնացիոնալներին մի շարք պարագլուխներ, վորոնք մձուղական ղեր են խաղում այդ ինտերնացիոնալների քաղաքականութունը վորոշելու մեջ (Ադլեր, Դե-Բրուկեր), ղուրս են ղալիս ղործողութունների միջազգային միասնութան դեմ՝ ի պաշտպանութուն իսպանական ժողովրդի: Անդրևական տրեդ-յունիոնների Գլխավոր խորհրդի լիդերները (պարագլուխները) (Սիտրին, Բեվին և այլն), բելգիական արձմիրութենական ղործիչները և չեխական սոցիալ-դեմոկրատները, — ահա թե ովքեր են շարունակում միասնութան դեմ ղուրս ղալ այն մոմենտին, յերբ Իսպանիայի ռազմաճակատներում մձուլում է Յեյրոպայի բոլոր ժողովրդների բախաը, ահա թե ովքեր են, վոր

կրականում ղբաղվում են ղանցարարութամբ (ПОПУСТИТЕЛЬСТВО), հեշտացնելով ղերմանական և խտալական ղաղանացած Փաշիզմի արյունոտ պրովոկացիաները: II Ինտերնացիոնալի քարտուղար Ֆ. Ադլերը հանրապետական Իսպանիայում կատարած իր շրջադայութան ժամանակ շարունակում էր կատաղի կամպանիա մղել ժողովրդական ճակատի դեմ, հեշտացնելով իսպանական տրոցկիստների ղալաճանական ղրոհները, — իսպանական տրոցկիստների, Ֆրանկոյի և խտալ-ղերմանական Փաշիզմի այդ ղործակալների, վորոնք ղղտում են պառակտում առաջ բերել ժողովրդական ճակատում և բաց անել ճանապարհը խոզվարարների և ինտերվենտների բանակների համար, ինչպես այդ պարզ ցույց տվեց վերջերս Բարսելոնում, Կատալոնիայի մայրաքաղաքում, տեղի ունեցած տրոցկիստական-Փաշիստական պրովոկացիան:

Յերբ հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի ղատավարութունը պարզեց, վոր Սորհրդային Միութան տերիտորիայում սոցիալիզմի ղարշելի ունեղատի, հայրենիքի ղալաճան և ժողովրդի թշնամի Տրոցկու ղեկավարութամբ, պատերազմի ղերմանական և ճաղոնական հրձիգների առաջադրութուններով աշխատում էր վնասարարների, ղիվիբսանտների, լրտեսների ու տերիտորիաների բանդան, ապա ինչպես պահեցին իրենց II Ինտերնացիոնալի լիդերները: Նրանք բացահայտորեն ղուրս յեկան պաշտպանելու Փաշիզմի և պատերազմի հրձիգների մերկացված ղործակալներին:

## ԱՆՈՂՈՔԱԲԱՐ ՊԱՅՔԱՐԵԼ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏՐՈՅԿԻՍՏԱԿԱՆ ՎԵԱՍԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՄ

Մինչդեռ տրոցկիզմի դեմ մղվող պայքարը հանդիսանում է այն պայքարի բաղկացուցիչ մասը, վոր միջազգային պրոլետարիատը մղում է պատերազմի դեմ, ևՍՀՄ պաշտպանութան, բանվորական շարժման միասնութան, ժողովրդական մակտոի համար, Փաշիզմի ու պատերազմի դեմ: Իր հերթին տրոցկիզմի դեմ մղվող պայքարն այն պայքարի բաղկացուցիչ մասն է, վոր մղվում է բանվորական շարժման մեջ պրովոկացիաների և լրտեսութան դեմ:

Միջազգային տրոցկիզմը Փաշիզմի ղործակալութունն է: Իսպանական տրոցկիստները, կատարելով ղերմանական և խտալական ինտերվենտների ուղղակի առաջադրութունը, պայքար են մղում իսպանական ժողովրդական ճակատի դեմ, բանվոր դասա-

կարգի միասնութեան, արհմիութենական միասնութեան դեմ, սոցիալիստական և կոմունիստական յերիտասարդութիւնը միավորելու դեմ, միասնական կարգապահ ժողովրդական բանակի դեմ: Իսպանական տրոցկիստներն ամենավոխերիմ թշնամիներն են ինտերնացիոնալ բրիգադներէ, վորոնց նրանք տալիս են «պրետորիական դիւրեղին» անունը: Իսպանական տրոցկիստներն ամենավոխերիմ թշնամիներն են Խորհրդային Միութեան, վորն իսպանական ժողովրդին բարոյական ու քաղաքական վիթխարի ոգնութիւնն է ցույց տալիս:

Ընկ. Դիմիտրովը գրել է.

«...Պայքար մղելով Փաշիգմի դեմ, անհրաժեշտ է ամենայն անողորմութեամբ հարվածել նրա տրոցկիստական գործակալութեանը, վոր հանդիսանում է լրտեսների, ղեկերսանների, աեւորիստների, գերմանական Փաշիգմին ու ճապոնական ռազմավարութեանը ծառայող պրովոկատորներէ բանդա: Տրոցկիստական վիժվածքները Փաշիստական հետախուզութիւններէ առաջադրութիւններով քայքայել աշխատանք են կատարում սոցիալիզմի յերկրի դեմ, անում են ամեն ինչ, վորպեսզի խորացնեն պառակտումը և թույլ չտան բանվորական շարժման միասնութիւնն մյուս յերկիրներում, աշխատում են ներսից քայքայել ժողովրդական ճակատի շարժումը: Նրանք ամենուրեք հանդես են դալիս իբրև բանվորական շարժման վնասարարներ, Փաշիգմի դեմ ժողովրդական մասսաների մղած պայքարի կազմալուծիչներ: Փաշիգմի և պատերազմի դեմ միջազգային պրոլետարիատի միասնութիւնն աներեւակայելի և անհնարին է առանց Փաշիգմի տրոցկիստական դործակալութեան դեմ պայքարելու»: (Գ. Դիմիտրով, «Միջազգային պրոլետարիատի միասնութիւնը ներկա մոմենտի բարձրագույն հրամայական պահանջն է»: Տե՛ս «Կոմունիստիչեսկի Ինտերնացիոնալ» ժուռնալի 1937 թվականի մայիսի № 5-ը):

### ԱՄԲՈՂ ԱՇԽԱՐՀԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՇԵՂԱՓՈՒԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱՂԹԱՆԱԿ ՏԱՆԵԼՈՒ ԳՐԱՎԱԿԱՆՆ Ե

Իսպանական ժողովրդի հերոսական պայքարը միջազգային ամբողջ պրոլետարիատի սեփական գործն է: Իսպանիայի դեպքերի որինակից ակնբախտներն յերևում է, թէ ինչպիսի հսկայական

դեր է խաղում համերաշխութեան միջազգային շարժումը: Այն մոմենտին, յերբ Փաշիստական Գերմանիան և Իտալիան իրենց տեխնիկայով ու զորքերով ողնութեան յեկան իսպանական խռովարարներին, այն մոմենտին, յերբ յեվրոպական դեմոկրատիաները, քողարկվելով Լոնդոնի «չմիջամտելու կոմիտեյով», միակողմանի «չեզոքութիւն» հայտարարեցին, միջազգային պրոլետարիատը, բոլոր յերկիրներէ ժողովուրդները և ամենից առաջ Խորհրդային Միութեան բանվոր դասակարգն ու ժողովուրդները ներգործուն, ուժեղ աջակցութիւն ցույց տվին Իսպանիայի բանվոր դասակարգին ու ժողովուրդներին:

Հազարավոր կամավորներ—հակա֓աշիստներ ժամանեցին Իսպանիա, վորպեսզի իրենց իսպանական յեղբայրների հետ միասին պայքարեն Փաշիգմի դեմ: Ինտերնացիոնալ բրիգադները հերոսաբար կռւում են Իսպանիայի բոլոր ռազմաճակատներում, ցույց տալով կարգապահութեան և ժողովրդական ճակատին անձնուրացորեն նվիրված լինելու որինակ: Իսպանիայի ժողովրդական մասսաները, միջազգային պրոլետարիատը և բոլոր աշխատավորները յերբեք չեն մոռանա Հանս Բեյմլերի, —11-րդ բրիգադի քաղկոմիսարի, գերմանական հին հեղափոխական մարտիկի անունը, կապիտան Գվիլո Պիչեւիլի—Գարիբալդիի անվան բրիգադի իտալական կոմունիստի անունը, քաղկոմիսար Ռայլ֓ Փոկսի, —անգլիական դրոզի և շատ ուրիշների անունները, վորոնք հերոսների մահով ընկան Իսպանիայի ռազմաճակատներում, ողնելով իսպանական ժողովրդին՝ ազատելու Փաշիստ բռնազբաւիչներէ:

Ընկ. Անդրե Մարտին «Իսպանական ժողովրդի պատերազմն անկախութեան համար» իր հոդվածում\*) գրել է.

«Իհարկէ Իսպանիայում դրութիւնը մինչև այժմ էլ լուրջ է: Փաշիստական թշնամին հզորապես զինված է: Չնայելով վերահսկողութեանը, իսպանական Փաշիգմն ողտվում է Փաշիստական յերկու խոշոր պետութիւնների ոժանդակութեանից, իսկ յեվրոպական դեմոկրատիայի յերկիրները, — առաջին հերթին Անգլիան ու Ֆրանսիան, — հակառակ այդ յերկիրների ժողովրդի կամքի, ողնում են Իսպանիայի ժողովուրդը ստրկացնելուն: Իսպանիայի որինական կառավարութեանը զենքի և ռազմանյութերի դնումներն արդէլէլը, ինտերնացիոնալ կամավորների մուտքն արդէլէլը, այն «վերահսկողութիւնը», վորն իրականում հանդիսանում է հանրապետական

\*) Տե՛ս «Ինքնիկ» ժուռնալի 1937 թ. հունիսի 1-ի № 11-ը:

Իսպանիայի ողակում, մինչդեռ գերմանական և իտալական շոգենավերն ու սավառնակները շարունակում են անարգել կերպով ամեն տեսակ ոգնութուն հասցնել Ֆրանկոյին, — «չեզոքութան» այս բոլոր միջոցառումները միայն ոգնում են Փաշխատներին:

Միջազգային ոգնութունը պետք է վոչ միայն շարունակվի, այլև նշանակելիորեն ընդլայնվի: Պետք է կազմակերպել պարենի, հազուստի, դեղորայքի, բժշկական կադրերի հայթայթումը հանրապետական Իսպանիայի մարտիկներին: Հարկավոր է փրկել կանանց ու յերեխաներին, դուրս տանելով նրանց մի յերկրի սահմաններից, վորը վառվում է Փաշխատական ուժակոծութունից: Հարկավոր է իսպանական հանրապետութանը տալ նույնպիսի իրավունքներ, վորպիսիներից ոգտվում են մյուս պետութունները: Այն ոգնութանը, վոր ցույց են տալիս Խորհրդային Միութան աշխատավորները, պետք է անհապաղ միանա բոլոր յերկիրների բանվորների միասնական ճակատի ոգնութունը, բոլոր նրանց ոգնութունը, ում համար թանգ է ազատութունը: Վորքան ուժեղ լինի այդ միջազգային ոգնութունը, վորքան շատ նա ամրապնդի ու միաձուլի ժողովրդական ճակատը և Իսպանիայի ժողովուրդների հակաֆաշիստական միասնութունը, այնքան շուտ կլինի հաղթանակը»:

Այն, ինչ վոր Իսպանիայում անում են գերմանական և իտալական Փաշխատները, Փաշխատ ազրեսորները կսկսեն անել ամեն մի ոտար տերիտորիայում, հենց վոր մոմենտը հարմար համարեն: Փաշխատ ավազակների համար չկա ուրիշ պետութունների սահմանների անձեռնմխելիութուն: Նրանք գործ չունեն ժողովուրդների անկախութան հետ:

ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ ընկ. Լիտվինովը 1937 թվականի մայիսի 28-ին յեւույթ ունենալով Ազգերի Լիգայի խորհրդի նիստում, ընդգծեց, վոր Փաշխատական Գերմանիայի և Իտալիայի ինտերվենցիան, դա «Ազգերի Լիգայի անդամներից մեկի տերիտորիան ոտարերկրյա զինված ուժերը բռնությամբ մտցնելու անվիճելի դեպք է, ամենակոպիտ ձևի ազրեսիայի դեպք»:

Յեթե Գերմանիան և Իտալիան ուղմական ոգնութուն ցույց չտային խուվարարներին, հանրապետական բանակը վաղուց գեներալ Ֆրանկոյի խուվարար բանդաների հախիցը յեկած կլիներ:

«Խուվարարներին ոգնելու համար, — իր յեւույթում մատնանչել է ընկեր Լիտվինովը, — Իսպանիա թափվեցին տասնյակ հազարավոր լավ ուսուցված և զինված ոտարերկրացիներ, վորոնցից շատերը դտնվում էյին ոտար պետութունների զինվորական ծառայության մեջ և Իսպանիայի տերիտորիայում կազմեցին խոշորաթիվ գորամասեր: Մի քանի դեպքերում իսպանական հանրապետական բանակի դեմ խոշոր ճակատամարտեր էյին մղում բացառապես այդ ոտարերկրյա գորամասերը, ոտարերկրյա գեներալների հրամանատարությամբ: Իսպանական քաղաքները ուժակոծվում են ոտարերկրյա ինքնաթիռներով, վորոնց վարում են ոտարերկրյա ողաչունները: Մադրիդի քառորդ մասը, ամբողջ Գեոնիկա քաղաքը և բազմաթիվ ուրիշ քաղաքներ ու դյուղեր վոչնչացված են ոտարերկրյա ավիացիայի միջոցով: Կարելի յե ասել, վոր ներկայումս իսպանական հանրապետական բանակը ստիպված է զինված պայքար մղել վոչ այնքան խոուվարարների, վորքան այդ յերկիրը ներխուժած ոտարերկրյա ինտերվենտների դեմ»:

Խորհրդային Միութունը պարզ և առանց յերկմտութան վորոչեց իր զիրքն Իսպանիայի դեպքերի նկատմամբ: Փաշխատ ինտերվենտները վործում են Իսպանիան դարձնել համաշխարհային նոր սպանդի զինադաշտ: Խորհրդային Միութունը բազմիցս նախազգուշացրել է յեվրոպական այն պետութուններին, վորոնք մինչև այժմ չեն ուզում տեսնել, վոր, յերես տալով ազրեսորներին՝ նրանք նպաստում են համաշխարհային զավթողական պատերազմը հրահրելուն: Փաշխատ ազրեսորները կանգ չեն առնի այն բանի առջև, վոր ուրիշ ժողովուրդների անկախութան և հոգերի դեմ զինված ձեռքով վոտնձգութուններ անեն: Սահման չունեն պատերազմի Փաշխատ հրձիգների ավազակային ախորժակները:

Իսպանիայում մղվող պատերազմի ընթացքը ակնբախորեն ցույց է տալիս, վոր Փաշխատ ինտերվենտները վոչնչի առաջ կանգ չեն առնում, յերբ ձեռնամուխ են լինում իրականացնել իրենց ավազակային պլանները: Նրանք զինվորական կոչիկով վոտնատակ են տալիս մարդկայնության և իրավունքի ամենատարրական սկզբունքները: Նրանք կազմակերպում են խաղաղ քաղաքների

արյունոտ կալերածութիւն, սպանելով տասնյակ հազարավոր բոլորովին անմեղ կանանց ու յերեխաներին:

Ազգերի Լիգայի անդորութիւնը, բուրժուական ղեմոկրատիայի պետութիւնների զանցարարութիւնը ձեռնտու յեն միայն պատերազմի հրձիգներին:

«Փաշիստ ազբետներն ալըպիսի անպատիժ արարքներն ընտելացվել են զիջումների և ազբետորի հետ համաձայնութիւն վորոնելու քաղաքականութեամբ, վոր կիրառել և և մինչև այժմ ևլ կիրառում և Անգլիայի և Ֆրանսիայի բուրժուազիան: Յեթե զործը կախված լիներ Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարութիւններից, Իսպանիայում ևս կկրկնվեր նույնը, ինչ վոր տեղի ունեցավ Հարեչտանում և Մանջուստրը հաղթանակ տարավ անդեն ժողովուրդների դեմ: Բայց Իսպանիայում Փաշիստ խռովարարները և Փաշիստ ինտերվենտները ստիպված յեղան զործ ունենալու այնպիսի մի յերկրի հետ, վորտեղ աշխատավորները մորելիցացիայի յենթարկեցին իրենց ուժերը՝ ժողովրդական ճակատի հզոր շարժմամբ հակահարված տալու Փաշիզմին,—այն ևլ՝ այնպիսի մի յերկրի հետ, վորի պայքարը Փաշիստների դեմ, ինչպես ասում և ընկեր Ստալինը, դարձավ ամբողջ առաջավոր և պրոգրեսիվ մարդկութեան զործը»: («Բոլշեիկ», №10, 1937 թ. մայիսի 15):

Խորհրդային Միութիւնը խաղաղութեան, կուլտուրայի և բոլոր ժողովուրդների ազատութեան մեծագույն պատվարն և: Պրոլետարական ղեկատուութեան յերկաթե պատի վրա իրենց ճակատներն են ջարդում տրոցկիստական վնասարարները, լրտեսները, ղիվիերսանտները, տեռորիստները, գերմանական Փաշիզմի և ճապոնական ուղղամտութեան բոլոր վարձկան զործակալները: Պատերազմի Փաշիստ հրձիգներին կատաղեցնում և այն, վոր զոյութիւն ունի անպարտելի Խորհրդային Միութիւնը, վորը կապիտալիստական աշխարհի բոլոր աշխատավոր մասսաների համար մի փարոս և դեպի սոցիալիզմի հաղթանակը տանող ճանապարհին:

Փաշիզմի դեմ ամբողջ աշխարհի աշխատավորների մղած մեծ պայքարում հակայական նշանակութիւն ունի համերաշխութեան այն շարժումը, վոր ամբողջ աշխարհում կազմակերպում են

Մոպրի (հեղափոխութեան մարտիկներին ոգնող միջազգային կազմակերպութիւն) սեկցիաները: Զգտելով իր թիկունքն անվտանգ դարձնել հեղափոխական յելույթներից՝ Փաշիզմը հրեշտիւր սպիտակ տեռոր ծավալեց ժողովրդական մասսաների դեմ: Փաշիստական զնդանների և համակենտրոնացման ճամբարների կալանավորները հարյուր հազարների յեն հասնում: Մահապատիժներն ու խոչտանդումները, դազանային սպիտակ տեռորը,— սրանք հանդիսանում են Փաշիստ հրձիգների պատերազմի նախապատրաստութեան բաղկացուցիչ մասը:

Փաշիզմի այդ զոհերին բարոյական ու նյութական ոգնութիւն ցույց տալը, ժողովրդական ամենալայն մասսաների մորելիցացիան սպիտակ տեռորի դեմ պայքարելու համար,— ահա Մոպրի խնդիրը: Մոպրը գրավում և հակաֆաշիստական և հակապատերազմական ֆրոնտի ամենակարևոր ցանկաւորներից մեկը:

Իսպանիայում «Կարմիր ոգնութիւնը» (Մոպրը) հակայական աշխատանք և ծավալել հանրապետական բանակի վերավոր մարտիկներին ոգնութիւն ցույց տալու համար, կազմակերպել և հարցուրավոր հիվանդանոցներ և վիրակապման կայաններ, հոգում և սպանված մարտիկների յերեխաների մասին, փախստականների մասին, վորոնք փախչում են Փաշիստական դատաստանից: Իսպանիայում Մոպրն իսկական ժողովրդական «Կարմիր խաչ և»:

Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Միանդինալյան յերկիրներում,— ամենուրեք Մոպրի կազմակերպութիւններն ուժեղացնում են ամենուրեք հանրապետական Իսպանիային ոգնելու զործունց աշխատանքը հանրապետական Իսպանիային ոգնելու զործում, Թեթմանին, Ռակոչիին, Անտիկայանին, Պրեստեսին և կապիտալի բանտերում տառապող բոլոր մյուս հեղափոխական մարտիկներին պաշտպանելու զործում: Մերկացնելով Փաշիզմի դազանութիւնները, աշխատավորների լայն մասսաներին վտարի հանելով Փաշիստական սեպիտայի ղերիներին պաշտպանելու համար՝ Մոպրը հենց զբանով նպաստում և հակաֆաշիստական ճակատի զրոյների տակ ժողովրդական մասսաներ միավորելուն: Ամբապնդելով աշխատավորների միջազգային համերաշխութիւնը՝ Մոպրը հենց զբանով ակտիվորեն նպաստում և շովինիզմի և ուղղամտենչ Փաշիզմի մարդատյաց պրոպագանդայի դեմ մղվող պայքարին:

Ոգոտոսի 1-ի որը,— ֆաշիզմի ու պատերազմի դեմ մղվող պայքարի միջազգային որը— ամբողջ աշխարհի աշխատավոր մաս-

սաները միջազգային պրոլետարական համերաշխության դրոշի տակ իրենց բոլոր ուժերը միավորում են մարդկության մահացու քշնամու—ֆաշիզմի դեմ: Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի անպարտելի դրոշի տակ, Կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշի տակ՝ բանվորներն ու աշխատավորները, կանայք ու յերխտասարդությունը, կոմունիստներն ու բոլոր զխտակից բանվորները, հաջողեցնելով բանվոր դասակարգի գործողությունների միասնությունն ազգային և միջազգային մասշտաբով՝ կբարձրացնեն իրենց ցասկոտ ձայնը:

Դա՛ւրս ֆաշիստ ինտերվենտներին իսպանիայից:

Կորչե՛ն ֆաշիզմն ու պատերազմը:

Կորչի՛ գերմանական ֆաշիզմին ու ֆապսնական ռազմամուրթյանը ծառայող լրտեսների, դիվերսանտների, տեռորիստների, պրովոկատորների տրոցկիստական բանդան:

Հանուն բանվոր դասակարգի միասնության:

Հանուն ժողովրդական ֆակտի, ընդդեմ ֆաշիզմի և պատերազմի:

Հանուն սոցիալիզմի հաղթանակի ամբողջ աշխարհում:

Փաշիստ ինտերվենտների արյունոտ պատերազմն իսպանական ծողովրդի դեմ—մի ահավոր նախազուգացում է ամբողջ աշխարհի աշխատավորներին: Պատերազմի հրձիգների ավազակային ձեռքը կարող է կտրել միայն միջազգային պրոլետարիատի գործողությունների միասնությունը:



359

Գինը: 50 փող.

11

28 672

АРГУС

ПРОТИВ ФАШИЗМА И ВОЙНЫ

Изданно ЦК МОПР-а Арм. ССР  
Ереван, 1937